Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կոտայքի մարզի «Հացավանի Հ. Մանուկյանի անվ.միջն. դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Պատմություն

Թեմա՝ Ուսուցման մեթոդները պատմության դասին

Վերապատրաստող, մենթոր՝ Մկրտչյան Մելիք

Ուսուցիչ՝ Վարդանյան Անի

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն ----------3

1. Մեթոդների տեսակները ըստ սովորողի դերի----------4

2. Ուսուցման մեթոդները պատմության դասավանդման ընթացքում ----------6

Եզրակացություն----------13

Օգտագործված գրականության ցանկ----------14

Ներածություն

21-րդ դարում աշխարհի արագընթաց տեմպերով փոփոխվելը բերեց նրան, որ կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք սկսեցին գիտակցել, որ դասավանդման և ուսուցման ավանդական ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Մշակվեցին ու ներդրվեցին այլընտրանքային նոր մոտեցումներ, որոնցում էապես վերանայվեցին ուսուցման խնդիրներն ու ուսուցչի դերը: ՈՒսուցման գլխավոր նպատակը դարձավ սովորեցնել սովորել, ձևավորել գիտելիքները կիրառելու կարողություններ և հմտություններ, ստեղծագործական մտածողություն, նորը ստեղծելու կարողություն: ՈՒսուցչակենտրոն ուսուցումից անցում կատարվեց աշակերտակենտրոն ուսուցման. ուսուցիչը ոչ թե պատրաստի գիտելիքներ պետք է տա սովորողին, այլ խթանի նրանց ինքնուրույն որոնումը:

Դասավանդման ընթացքն ավելի հեշտ կազմակերպելու, բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ: Մեթոդների ընտրությունը ինքնանպատակ չի կարող լինել, այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք կարող են իրապես հեշտացնել դասապրոցեսը և մատչելի դարձնել բազմապիսի այլ հետաքրքրություններ ունեցող սովորողի ուսումնառության գործընթացը, և որոնց շնորհիվ աշակերտը կամա թե ակամա կդառնա դասապրոցեսի մասնակից:

Մանկավարժության մեջ չկա մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր եղանակներն էլ ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել, իսկ ընտրությունը կատարում է ուսուցիչը, իսկ լավագույն դեպքում առաջարկում է աշակերտը:

Այսպիսով, հետազոտական աշխատանքի նպատակն է պարզաբանել մեթոդների և հնարների դերը պատմության ուսուցման գործընթացում :

1. Մեթոդների տեսակները ըստ սովորողի դերի

Ուսուցումն ավելի արդյունավետ է, երբ դա ուրախություն է պատճառում։

Պ. Կլայն

Ըստ էության, ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն այն չի կարող կամայական բնույթ կրել: Մեթոդների ընտրության վրա ազդող մի շարք գործոններ կան, մասնավորապես՝

• ուսուցման նպատակները և խնդիրները,

• բովանդակությունը,

• ուսումնական նյութի ծավալը (քանակը) և բարդությունը,

• սովորողների շահագրգռվածությունը,

• սովորողների տարիքն ու աշխատունակությունը,

• ուսումնական ժամաքանակը,

• նախորդ դասերին կիրառված մեթոդները,

• ուսումնական պարապմունքների տիպը և կառուցվածքը,

• ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները,

• սովորողների թիվը դասարանում,

• ուսուցչի պատրաստվածության մակարդակը[1]:

ՈԻսումնական նոր մեթոդների հիմքում ընկած է սովորողների կողմից մատուցվող նյութը ինքնուրույն յուրացնելու ունակությունը, սակայն պատմության դասավանդման ընթացքում մեթոդական ինչպիսի միջոցներ էլ կիրառվի, կարևոր է

[1] «Ներառող դասավանդում» ուսուցչի մեթոդական ձեռնարկ, ՀՄԿ, Երևան 2023, էջ 147:

ուսուցչի բանավոր խոսքը, շեշտադրությունը, դասի ներկայացման ձևը, իսկ ժամանակակից մոտեցումներն արդյունավետ են սովորողներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու տեսանկյունից։

Գոյություն ունեն դասավանդման մեթոդների բազմաթիվ դասակարգումներ։ Ուսումնառության գործընթացում սովորողների դերի վրա հիմնված դասակարգմամբ մեթոդները բաժանվում են 3 խմբի.

1. Պասիվ։

Այստեղ սովորողներն ուսումնառությունն իրենց վրա կրող «օբյեկտներ են», որոնք պետք է յուրացնեն և վերարտադրեն գիտելիքների աղբյուրի՝ ուսուցչի փոխանցած նյութը։ Հիմնական մեթոդներն են դասախոսությունը, ընթերցանությունը և հարցումը։

2. Ակտիվ։

Այստեղ սովորողներն ուսումնառության սուբյեկտ են և կատարում են ստեղծագործ առաջադրանքներ, ուսուցչի հետ երկխոսության մեջ են մտնում։ Հիմնական մեթոդներն են ստեղծագործ առաջադրանքները, հարցերն ուղղված են աշակերտից ուսուցչին և հակառակը։

3. Փոխներգործուն։

Այս մեթոդները հնարավորություն են տալիս ուսումնական գործընթացի մասնակիցներին, ներառյալ ուսուցչին, փոխազդել միմյանց վրա։ Այս մեթոդները առավել համապատասխանում են անձի անհատականության բացահայտմանն ուղղված մոտեցումներին, քանի որ վերջիններս ենթադրում են համատեղ ուսուցում (խմբային, համագործակցային ուսուցում), ընդ որում, և՛ սովորողները, և՛ ուսուցիչը ուսումնական գործընթացի սուբյեկտներ են այս դեպքում։ Ուսուցիչը հաճախ ներկայանում է կրթական գործընթացի կազմակերպչի, խմբի ղեկավարի, աշակերտների նախաձեռնությունների համար անհրաժեշտ պայմաններ ստեղծողի դերում։ Բացի այդ, փոխներգործուն մեթոդի հիմքում ընկած է մասնակիցներից յուրաքանչյուրի փորձի միջոցով մյուսի վրա ուղղակի ազդեցության մեխանիզմը։ Նոր գիտելիքը և կարողությունը ձևավորվում են հենց այսպիսի փորձի հիման վրա։

2. Ուսուցման մեթոդները
պատմության դասավանդման ընթացքում

Քանի որ ուղեղը ի վիճակի չէ ուշադրություն դարձնել ամեն ինչի,
ոչ հետաքրքիր, ձանձրալի, մռայլ դասերը պարզապես չի հիշում:
Լ. Էլլիսոն

Խոսելով ուսուցման՝ մեր կրթակարգում տեղ գտած բազմաթիվ մեթոդների մասին, պետք է ընդգծել դասի տարբեր փուլերի համար դրանցից յուրաքանչյուրի կիրառման նպատակահարմարության բաղադրիչը: Այսպես, դասի նախապատրաստական մասը պետք է սկսել կազմակերպչական հարցերից՝ տնային աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներով, նոր դասի թեման և նպատակը հաղորդելով: Այս փուլում կիրառվող արդյունավետ մեթոդներից են.

- մտագրոհ
- խմբավորում
- պրիզմա
- հինգրոպեանոց ազատ շարադրանք
- ԳՈՒՍ աղյուսակի առաջին և երկրորդ սյունակները
- մուտքի տոմս և այլն:

Նոր նյութի ներկայացման փուլում կիրառման համար նպատակահարմար են հետևյալ մեթոդները.

- խճանկար
- զբոսանք պատկերասրահում
- պրիզմա
- ձնագնդի
- սատանայի հնարք
- Վեննի դիագրամ
- ապագայի անիվ
- դերային խաղ
- T-աձև աղյուսակ

• քառաբաժան

• բանավեճ

• m-աձև աղյուսակ։

Դասի ավարտին հարմար մեթոդներ են.

• ելքի քարտեր

• կիսատ նախադասություն

• վարդ, փուշ, բողբոջ

• 10 տարի անց և այլն։

Ուսուցիչը որքան լավ տիրապետի մեթոդների այս համակազմին և դրանց կիրառման նրբություններին, այնքան ավելի արդյունավետ կկարողանա ընտրել դրանք դասի պլանավորման և իրագործման փուլերում։ Տարբեր մեթոդների և հնարների օգտագործումն ու համադրումը դասի տարբեր փուլերում հանգեցնում են դասապրոցեսին աշակերտների ակտիվ մասնակցությանը և ներգրավվածությանը։ Ներկայացնենք նշված մեթոդներից մի քանիսը։

Մտագրոհ կամ **մտքերի տարափ** մեթոդը դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից է։ Մտագրոհի ժամանակ կարևոր է, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին,որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները։

Մտագրոհ մեթոդը կիրառելը շատ տեղին է օրինակ հասարակագիտություն առարկայի «Պահանջմունքներ» թեմայի շուրջ։ ՈՒսուցիչը գրատախտակին կարող է շրջանի մեջ վերցնել «պահանջմունք» բառը, իսկ աշակերտները խառը սկզբմունքով թվեն բնական, սոցիալական ու մշակութային պահանջմունքները, օրինակ՝ կացարան, հագուստ, սնունդ, համակարգիչ, ջուր, թատրոն, կրթություն և այլն։

Պրիզման շատ ակտիվ ուսուցման մեթոդ է, խրախուսում է սովորողներին ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ։ Այն կիրառվում է բացառապես դասի սկզբնական, խթանման փուլում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը։ Մեթոդի կիրառումն ապահովում է դասի հաջող մեկնարկը։ Այն անցնում է շատ արագ և աշխույժ։ Մեթոդն արդյունավետ է այն ժամանակ, երբ

պահանջվում են կարճ, համառոտ բառերի, հատկանիշների, ցուցանիշների թվարկումներ: Խմբային քննարկումների՝ նման ձևով կազմակերպումն ապահովում է ակտիվություն, աշխուժություն, ֆիզիկական շարժունակություն, թարմություն և հետաքրքրություն: Վարժության կատարման համար անհրաժեշտ է տալ մեկնաբառը, ճյուղավորել մեկնաբառը, ճյուղավորել գրանցված երկու բառերից յուրաքանչյուրը, սկսել պրիզման փակելու գործընթացը,լրացվում են նախորդ երկու բառերի ասոցիատիվ կապը հաշվի առնելով: Պրիզման եզրափակվում է վերջնաբառով, ամփոփիչ քայլը մեկնաբառի ու վերջնաբառի միջև տրամաբանական կապի բացահայտումն է: Օրինակ՝ 5-րդ դասարանում «իմ հայրենիքը» առարկայից կարելի է վերցնել «հայրենիք» կամ «ավանդապատում» բառերը:

T-աձև աղյուսակը ճկուն միջոց է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակառակ որակները, դրական կամ բացասական կողմերը, բերվում են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: Այս աղյուսակը կատելի է արդյունավետ օգտագործել դասի տարբեր փուլերում: Շատ հարմար է պատմության դասին հատկապես պայմանագրերի դրական և բացասական կողմերը քննարկելու համար: Օրինակ՝ 7-րդ դասարանում Արտաշատի պայմանագիրը կարելի է արդյունավետ քննարկել դրական և բացասական դիտանկյունից:

T - աձև աղյուսակ

Դրական	Բացասական

Վեննի դիագրամը կառուցվում է 2 շրջանագծերով, որոնք կենտրոնում ունեն հատման մակերես: Այդ դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց

հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով: Այն շատ հարմար է կիրառել համաժամանակյա 2 գործողություն համեմատելու համար, օրինակ՝ նախնադարի փուլերը, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսները և այլն:



Աշակերտների ուշադրությունը դասի ընթացքում ստուգելու հետաքրքիր մեթոդ է **Սատանայի հնարը**: Այս մեթոդի էությունն այն է, որ նյութը ներկայացնելիս ուսուցիչը դիտավորյալ սխալ միտք է արտահայտում՝ ցանկանալով ստուգել սովորողի ուշադրությունը:

Պատմության դասավանդման գործընթացում կիրառվող **քառաբաժան** մեթոդը չափազանց հարմար է շարադրանքի հետ աշխատելիս:Ուսումնական նյութն ընթերցելուց հետո սովորողներն առաջին վանդակում, որը կրում է «Ինչ էիք տեսնում տեքստը կարդալիս» զետեղում են այն մտքերը,որոնք կբխեն հարցադրումից:

Երկրորդ վանդակում սովորողներն արտահայտում են այն հույզերը,որոնք պահանջվում են «ի՞նչ էիք զգում տեքստը կարդալիս»:

Երրորդ վանդակում սովորողները զետեղում են այն մտքերը,որոնց միջոցով նրանք կկարողանան իրական կյանքի և օբեկտիվ իրականության հետ կապել պատմական իրադարձությունները,փաստերն ու երևույթները՝ «Պատմական իրադարձությունների կապը կյանքի և օբեկտիվ իրականության հետ»:

Չորրորդ վանդակում սովորողները ձևակերպում են նոր վերնագիր կամ հորինում են այն,խմբագրում դասի վերնագիրը «Դասի նոր վերնագիրը»։

Ի՞նչ էիք տեսնում տեքստը կարդալիս։	Ի՞նչ էիք զգում տեքստը կարդալիս։
Կապը իրական կյանքի հետ։	Նոր վերնագիր և պատկերանշան։

Ինչպես նախապատրաստական, այնպես էլ կշռադատման փուլում կիրառվող՝հաճախ օգտագործվող մեթոդներից է **ԳՈՒՍ**-ը։ Այս մեթոդը երեք սյունակներից բաղկացած աղյուսակ է, որը կարող է դառնալ սովորողների ուղեցույցը։ Այն կառուցողական ուսուցման մեթոդի մաս է կազմում, նրա կիրառման ժամանակ սովորողները բավական հեռանում են ավանդական մեթոդներից։ ԳՈՒՍ աղյուսակը մշակվել է որպես ուսումնական ընթերցանության ռազմավարության ձև։ Աղյուսակը կարելի է գծել գրատախտակին կամ մեծ թղթի վրա ,որ տեսանելի լինի հարցադրումները, և գրելու համար հարմար։ Կարելի է կիրառել օրինակ «Քրիստոնեության ընդունումը Հայաստանում» թեման ուսումնասիրելիս։

Գ **/գիտեմ/**	**ՈՒ** **/ուզում եմ իմանալ/**	**Ս** **/սովորեցի/**

Ելքի քարտը հրաշալի միջոց է դասի ավարտը հետաքրքիր կազմակերպելու համար։ Առանձին թերթիկների վրա կամ գրատախտակին հետևողականորեն դասանյութին վերաբերող մեկ հարց գրելը, որը կզարգացնի սովորողի մտածելու և կշռադատելու կարողունակությունը։ Օրինակ՝ «Տիգրան Մեծի նվաճողական քաղաքականությունը»

թեման 7-րդ դասարանում ուսումնասիրելիս հետաքրքիր ելքի քարտ է՝ ի՞նչ խորհուրդ կտայիր Տիգրան Մեծին, եթե հանդիպեիր նրան: Նախորդ դասի ելքի քարտը հաճախ կարող է ծառայել նաև որպես հաջորդ դասի **մուտքի տոմս**:

Կիսատ նախադասությունները մեթոդը ևս դասը ավարտելու հաջողված փորձ է: Այս դեպքում սովորողներին հանձնարարվում է ավարտել հետևյալ նախադասությունները:

- Ես այսօր սովորեցի…

- Ինձ զարմացրեց…

- Ինձ հետաքրքրեց…

-  Մի բան, որ չհասկացա…

- Մի բան, որ կուզենայի ավելին իմանալ…

- Այս դասից հետո ես զգում եմ…

- Ինձ ամենաշատը դուր եկավ…

Դասն ավարտելու երրորդ մեթոդը **10 տարի անցն է**: ՈՒսուցիչը խնդրում է աշակերտների ասել կամ գրի առնել մեկ բան, որը ինքը կհիշի այս դասից նույնիսկ 10 տարի հետո: Այս մեթոդը ուսուցողական է այն առումով, որ պատմությունից քաղած դասերն են մնում, որոնք պետք է սովորել, հիշել և կրկնել կամ չկրկնել:

Դասն ավարտելու հաջորդ մեթոդը՝ **Անդրադարձը**, հանգամանորեն ներկայացված է ստորև։ Այն կարելի է կիրառել ցանկացած դաս ամփոփելիս։

վարդ	**փուշ**	**բողբոջ**
Նշեք մեկ բան, որ լավ հասկացաք։	Նշեք մեկ բան, որ սովորելիս դժվարության բախվեցիք։	Նշեք մեկ բան, որն ուսումնասիրելուց հետո Ձեր գլխում նոր միտք ծագեց։

Այսպիսով, մեթոդների կիարառման արդյունքում կարևոր է ստեղծել այնպիսի աշխատանքային մթնոլորտ, որ բոլոր աշակերտնեևը ներգրավվեն ուսուցման գործընթացի մեջ։

Եզրակացություն

Արդի ժամանակներում ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Ժամանակակից մեթոդներով ուսուցումը սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ դասավանդողն ու սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում: Սովորողները ոչ թե ունկնդիրներ են,այլ դասի ակտիվ մասնակիցներ և ինքնուրույն գիտելիք ձեռք բերողներ: Այս դեպքում նրանք ձեռք են բերում ոչ միայն գիտելիքներ, այլ նաև դրանք կիրառելու, մտածելու, վերլուծելու, ինքնուրույն խնդիրներ լուծելու, համագործակցելու և մի շարք այլ կարողություններ ու հմտություններ:

Մեթոդների կիրառումը նախապես պլանավորված նպատակին հասնելու միջոցներ և գործիքներ են ուսումնական միջավայրում: Յուրաքանչյուր դաս ենթադրում է ստեղծագործական մեծ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչն ու աշակերտները գտնում և մշակում են այն մեթոդներն ու հնարները, որոնք տանում են դեպի դասի նպատակների արդյունավետ իրականացում:

ՈՒսուցչի համար կարևոր է ոչ միայն մասնագիտական տեսական գիտելիքներ ունենալը, այլև դրանք կիրառելու հմտությունները: Կարևոր է նաև, որ ուսուցիչը անընդհատ զբաղվի ինքնակրթությամբ՝ հարստացնելու համար մեթոդների իր զինանոցը և ցուցաբերի ստեղծագործական մոտեցում այդ հարցում:

Զրույց, պրիզմա, մուտքի տոմս, մտագրոհ, ԳՈՒՍ, Վեննի դիագրամ, T-աձ, m-աձև, աղյուսակներ, ձնագնդի, քառաբաժան, ելքի քարտեր, անդրադարձ, կիսատ նախադասություններ և այլ մեթոդները արդյունավետ են, քանզի ստեղծում են աշխատանքային մթնոլորտ, դասը դարձնում են մասնակցային ու հետաքրքիր, մոտիվացնում են սովորողներին և նրանց ներգրավում ուսուցման պրոցեսում:

Օգտագործած գրականության ցանկ

1. Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Արնաուդյան Ա. և ուրիշներ, «Կառուցողական ուսուցման հիմունքները և մեթոդները». Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՌԵՔՍ 2004։

2. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020։

3. «Ներառող դասավանդում», Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, ՀՄԿ, Երևան 2023։